Սեպտեմբերի 3-ին նախարար Վահան Քերոբյանն ընդունել է ԱՄՆՄԶԳ տնօրեն Ջոն Ալելոյին և «Իմ Հայաստան» ծրագրի ներկայացուցիչներին

Սեպտեմբերի 3-ին նախարար Վահան Քերոբյանն ընդունել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման գործակալության (ԱՄՆՄԶԳ) տնօրեն Ջոն Ալելոյին և «Իմ Հայաստան» ծրագրի ղեկավար Սիսակ Մխիթարյանին և այլ ներկայացուցիչներին:

Հանդիպմանը մասնակցել են նաև նախարարի տեղակալ Նարեկ Տերյանը, ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող Ալֆրեդ Քոչարյանը և զբոսաշրջության կոմիտեի այլ աշխատակիցներ:

Հանդիպման հիմնական նպատակն էր՝ ներկայացնել «Իմ Հայաստան» ծրագրի շրջանակում մշակված «Հայաստանի օրինակելի փորձառություններ» գնահատման չափանիշներն ու ստանդարտները:

Փաստաթուղթը մշակվել է «Իմ Հայաստան» ծրագրի կողմից, որը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ-ի և իրականացվում Սմիթսոնյան ինստիտուտի կողմից:Ծրագիրը նպաստում է զբոսաշրջային նոր փորձառությունների զարգացմանը՝ հիմնվելով երկրի տարբեր զբոսաշրջային տարածաշրջանների նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության վրա: Ծրագիրն աջակցել է շուրջ 150 զբոսաշրջային փորձառությունների, որոնց թվում՝ ավանդական ուտեստների պատրաստումը և գինու համտեսը, արհեստներն ու արհեստագործ վարպետների կողմից մատուցվող փորձառնությունները, համայնքային փառատոնները, թանգարանային ծրագրերը և բնաշխարհի ուսումնասիրությունը՝ արշավների, ձիավարության և արտաճանապարհային տուրերի միջոցով:

«Հայաստանի օրինակելի փորձառությունները» լավագույնս ներկայացնում են Հայաստանի պատմությունը, բնությունը, ավանդույթները և այլն: Զբոսաշրջային բարձրորակ փորձառությունների հավաքածուի ցանկում ընդգրկված փորձառությունները ոչ միայն բացառիկ են, այլև մատուցվում են ջերմ և բանիմաց հյուրընկալների կողմից: Այս փորձառություններն ակտիվորեն ներգրավում են այցելուներին՝ ստեղծելով հիշողություններ, որոնք դեռևս երկար պահպանվում են փորձառությունից հետո և ստեղծում վառ տպավորություններ Հայաստանի մշակութային ժառանգության վերաբերյալ:

Այն հանդիսանում է շուկայական պահանջներին համապատասխան զբոսաշրջային յուրահատուկ փորձառությունների հավաքածու, որոնք ճանապարհորդներին կապում են Հայաստանի մշակութային ժառանգությանը:

ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն «Իմ Հայաստան» ծրագրի հետ սերտ համագործակցությամբ պատրաստ է ներայավ

Քանի որ ծրագիրը մոտենում է ավարտին, ստեղծված փաթեթը փոխանցվեց Զբոսաշրջության կոմիտեին՝ հետագայում ոլորտի տնտեսավարողներին գնահատելու համար:

Որպեսզի առաջնորդվեն այդ ստանդարտներով և ավելի բարձր ծառայություններ կարողանան մատուցել:

Ինչպես են մշակված փորձառությունները ներկայացվում ճանապարհորդներին, որպեսզի լինեն որակյալ, հուսալի, շուկայի պահանջներին համապատասխան և արտացոլեն Հայաստանի մշակութային ժառանգությունը:

Խթանել փորձառությունները և օգնել կապ հաստատելու զբոսաշրջիկների հետ:

Ծրագրի ներկայացուցիչները նախարարին են ներկայացրել իրենց ծրագիրը, որակի ստանդարտները և գնահատման մեթոդաբանությունը: Քննարկվել են ծրագրի հետագա իրականացման հետ կապված հարցեր:

«Իմ Հայաստան» ծրագրի հետ՝ հավատարիմ մնալով հայկական հարուստ ժառանգությունն աշխարհին ներկայացնելու իր առաքելությանը»

Վայոց ձորի բնական և պատմական հարստությունը, մարզի բազմազանությունը լավագույնս ներկայացնելու նպատակով: Գիրքն իր ինտերակտիվ բովանդակությամբ կնպաստի մարզում զբոսաշրջիկների թվի աճին»:

րագիրը նպատակ ունի ցուցադրելու այն արդյունավետ կապը, որ կարող է լինել մշակույթի և տնտեսության զարգացման միջև: Մշակութային զբոսաշրջության հնարավորությունները, որ մշակվել են «Իմ Հայաստան» ծրագրի և մեր առանցքային գործընկերների՝ հանձինս ՀԲԸՄ-ի, փորձառության ու ջանքերի շնորհիվ, կնպաստեն Հայաստանի գյուղական բնակավայրերի կայուն տնտեսական աճին և այդ համայնքներում հայկական մշակութային ժառանգության կայունության բարելավմանը», - ասաց Սիսակ Մխիթարյանը, «Իմ Հայաստան» ծրագրի ղեկավար:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) և Սմիթսոնյան ինստիտուտի համագործակցության շրջանակում Հայաստանում մեկնարկում է նորարական ծրագիր, որը միտված է խթանելու ազգային մշակույթի պահպանումը՝ երկրում մշակութային զբոսաշրջության զարգացման միջոցով:

ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող այս քառամյա ծրագրի նպատակն է զարգացնել և ընդլայնել մշակութային զբոսաշրջությունը Հայաստանի մարզերում՝ հետազոտությունների, գիտական գործունեության, արհեստների սատարման, կարողությունների բարձրացման և տուրիզմի զարգացման հանդեպ ոչ ավանդական մոտեցման կիրառման միջոցով:

«Զբոսաշրջության համաշխարհային շուկան շարունակում է մեծանալ և ընդգրկել նոր վայրեր: Հայաստանի հարուստ մշակութային ժառանգությունը, յուրօրինակ խոհանոցը, գեղատեսիլ բնությունը և բարեհամբյուր մարդիկ դարձնում են այն առանձնահատուկ վայր», «Իմ Հայաստանը» ծրագրի նպատակն է Հայաստանը աշխարհի քարտեզում մատնանշել որպես համաշխարհային կարգի տուրիստական վայր: Մենք նախատեսում ենք ոչ միայն խթանել Հայաստանում մշակութային տուրիզմի զարգացումը, այլ նաև ընդլայնել Հայաստանի գյուղական վայրերի տնտեսական զարգացման հնարավորությունները»:

Մշակույթի պահպանման ասպարեզում Սմիթսոնյան ինստիտուտն աշխարհի տարբեր անկյուններում համայնքների հետ աշխատելու երկար տարիների փորձ ունի: Գործունեության շրջանակը ներառում է ինչպես հակամարտությունների և բնական աղետների պատճառով վտանգված մշակութային ժառանգության պաշտպանություն, այնպես և մշակութային տարբեր ոլորտների կայուն զարգացման աջակցություն:

Վերապատրաստման դասընթացների, ծրագրերի մշակման, համայնքների ներգրավման, փաստագրման և այլ միջոցներով Սմիթսոնյանի կուրատորները և ծրագրի անձնակազմը կաշխատեն հայաստանյան գործընկերների հետ՝ մշակութային ժառանգությունը պահպանելու նպատակով նոր ռազմավարություններ մշակելու համար:
Ծրագիրը կսատարի Հայաստանի ազգային արվեստը, արհեստներն ու երաժշտությունը, կնպաստի երկրի գյուղական համայքների զարգացմանը, կբարձրացնի Հայաստանի մասին իրազեկությունը միջազգային շուկաներում, ինչպես նաև կօգնի պաշտպանել և զարգացնել Հայաստանի բնական և մշակութային ժառանգությունը:
«Զբոսաշրջությունը կարող է տնտեսական զարգացման շարժիչ ուժ հանդիսանալ՝ ստեղծելով նոր աշխատատեղեր հյուրանոցներում և ռեստորաններում, նպաստելով տաքսու վարորդների, հուշանվերներ վաճառողների, տուրիզմի ոլորտի ընկերություններին ապրանքներ ու ծառայություններ մատուցողների բիզնեսի աճին»

Հատկապես կարևորվել է մարզերում զբոսաշրջային վայրերի ձևավորման և զարգացման հարցը, ինչը հնարավորություն կընձեռի Հայաստանի այցելուներին կդրդի ճանապարհորդել մայրաքաղաքից դուրս և ավելի շատ գումար ծախսել երկրի մարզերում՝ միաժամանակ նպաստելով Հայաստանի գյուղական վայրերի տնտեսական զարգացմանը:»
Սմիթսոնյան ինստիտուտը ԱՄՆ ՄԶԳ-ի հետ աշխատելու մեծ փորձ ունի կենսաբազմազանության պահպանության, թանգարանների աշխատուժի կարողությունների զարգացման և զարգացող մշակութային հաստատությունների աջակցությանն ուղղված միջազգային ծրագրերի շրջանակներում:

Երկու կազմակերպությունների միջև 2013 թվականին ամրագրված փոխըմբռման հուշագրի ներքո «Իմ Հայաստանը» ծրագիրը ներկայացնում է նոր, գործակցային մոտեցում՝ երկու կազմակերպությունների համատեղ ուժերով ավելի մեծ արդյունքների հասնելու նպատակով:

Սմիթսոնյան ինստիտուտի մասին
Սմիթսոնյան ինստիտուտը հիմնադրվել է 1846 թվականին: Այն աշխարհի խոշորագույն թանգարանն ու հետազոտական համալիրն է, որի կազմում են մտնում 19 թանգարաններ և պատկերասրահներ, Ազգային կենդանաբանական այգին և ինը հետազոտական հաստատություններ: Սմիթսոնյան ինստիտուտն ունի 6,400 աշխատակից, այդ թվում մոտ 500 գիտնականներ և ավելի քան 5,500 կամավորներ: 2014 թվականին Սմիթսոնյան հաստատություններ են այցելել աշխարհի մոտ 28 միլիոն մարդ, իսկ Սմիթսոնյան կայքերն արձանագրել են ավելի քան 175 միլիոն այցելություն: Սմիթսոնյան ինստիտուտի պատմական կամ գեղարվեստական արժեք ունեցող իրերի և նմուշների մոտավոր թիվը 138 միլիոն է:Սմիթսոնյանի մասին ավելին իմանալու համար այցելեք http://www.si.edu կայքը: «Իմ Հայաստանը» ծրագրի կոնտակային հասցե՝ myarmenia@si.edu:

2018թ. հունիսին մայրաքաղաք Վաշինգթոնում կայացած Սմիթսոնյան ֆոլքլայֆ փառատոնում Հայաստանի հաջող մասնակցության հարցում Զբոսաշրջության կոմիտեի ունեցած արժեքավոր ներդրման համար: Նա տեղեկացրել է, որ փառատոնի շրջանակում, «Իմ Հայաստան» նախագծի աջակցությամբ և Զբոսաշրջության կոմիտեի հետ համագործակցությամբ, Բոստոնում, Նյու Յորքում և Վաշինգթոնում տուրոպերատորների հետ կազմակերպված հանդիպումների ժամանակ ներկայացվել է Հայաստանի զբոսաշրջային գրավչությունը և, որպես այդ աշխատանքի շարունակություն, ընթացիկ տարվա հոկտեմբերին նախատեսվում է ամերիկյան տուրոպերատորների այցը Հայաստան:

Նախարար Մինասյանը գոհունակություն է հայտնել զբաստաշրջության ոլորտում արդյունավետ փոխգործակցության և ԱՄՆ ՄԶԳ կողմից մեծածավալ աշխատանքի կապակցությամբ՝ նշելով, որ Սմիթսոնյան փառատոնը կարող է Հայաստանի զբոսաշրջության հնարավորությունները ներկայացնելու լավ մեխանիզմ դառնալ: Միևնույն ժամանակ նա փաստել է, որ մեր երկրի զբոսաշրջային առավելությունները լիարժեք չեն օգտագործվում՝ նշելով գաստրո և էկոտուրիզմը, գիտական, մշակութային և այլ՝ ավանդական և նոր ուղղություններ ու առաջարկել զբոսաշրջության պատասխանատուների հետ քննարկել այդ խնդիրները և զբոսաշրջության զարգացմանն առնչվող բազմաթիվ այլ հարցեր՝ օգտագործելով նաև Զբոսաշրջության կոմիտեին կից ստեղծվող հասարակական խորհրդի հարթակը:
Հանդիպման ընթացքում կողմերը խոսել են նաև Հայաստանի տնտեսության զարգացման հեռանկարների, գերակա ուղղությունների և առաջնահերթությունների մասին: Արծվիկ Մինասյանը պատասխանել է Դեբորա Գրիսերին հետաքրքրող մի շարք հարցերի և, ամփոփելով խոսքը, նշել, որ տնտեսական քաղաքականության երկարաժամկետ նպատակն է ապահովել երկրի կայուն զարգացումը՝ ներառական տնտեսական աճը:
Հանդիպման ավարտին կողմերը, արժևորելով իրականացրած աշխատանքը, պատրաստակամություն են հայտնել շարունակել համագործակցությունը՝ նպատակ ունենալով բարձրացնել ընթացիկ և առաջիկա նոր ծրագրերի արդյունավետությունը: